Թերեզա
ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ»
հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

ՏԱՐԵՑՆԵՐ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐ. ՀԱՄԱՏԵՂ ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

DOI: 10.52174/2579-2989_2023.1-24

Հիմնաբառեր. *մանկապուն, ծերանոց, տարեցներ, մանկապան սաներ, խոցելի խմբեր, սոցիալական խնդիրներ, սոցիալական նախագծեր, ծրագրի ռիսկեր, շահագրգիռ կողմեր*

Մանկության և ծերության միջև ներդաշնակության գաղափարի ամրապնդումը կարող է ծառայել ի նպաստ խոցելի խմբերի աջակցման համակարգի: Երկու կողմն էլ՝ և՛ երեխաները, և՛ տարեցները, ջերմության և ուշադրության կարիք ունեն: Մանկապան և ծերանոցի բնակիչներին, որպես առանձնահատուկ հանրույթ, հատուկ են որոշակի խնդիրներ: Անհրաժեշտ է իրականացնել պիլոտային ծրագիր, որի միջոցով կփորձարկվի տարբեր սերունդների հանդիպման արդյունավետությունը, այնուհետև, բացահայտելով որոշակի նրբություններ, քայլ առ գնալ դեպի կառույցների համատեղման փուլ, որի վերջնանպատակը խոցելի խմբերի կյանքի որակի բարելավումն է:

Սոցիալական ոլորտի վիճակը, որը բնութագրում է համապատասխան հարաբերությունների մակարդակը, մեծապես կախված է նրանից, թե պետությունը, հասարակության հետ համատեղ, որքանով է հաջողությամբ լուծում համապատասխան խնդիրները: Երկրի հեղինակությունն ու մրցունակությունը մեծապես կախված են սոցիալական նախագծերի և ծրագրերի իրականացման հաջողությունից: Սակայն, նման նախագծերն ունեն առանձնահատուկ և բավական բարձր ռիսկեր[1]:

Տարբեր երկրներում, պայմանավորված մտածելակերպով, տարբեր է հանրության վերաբերմունքը ծերա-

[1] Дом пожилых людей и детский дом в с. Спасское – новый опыт, новый путь. https://sozidatel.dp.ua/dom-pozhilyh-lyudej-i-detskij-dom-v-s-spasskoe-novyj-opyt-novyj-put/

նոցների նկատմամբ:

ԱՄՆ-ում, օրինակ, ծերանոցը կյանքի տրամաբանական շարունակությունն է: Բոլոր նահանգներում դրանք առկա են, և մարդիկ նույնիսկ նախօրոք ընտրում են, հերթագրվում, գումար խնայում դրա համար: Ճապոնիայում նման տները մեծ պահանջարկ ունեն, քանի որ երկրի բնակչության 25%-ից ավելին 65-ից բարձր տարիքի մարդիկ են: Նման հաստատություններում հայտնվելը բավական բարդ է՝ պահանջելով պարտադիր վաղօրոք հերթագրում: Եվրոպայում, մասնավորապես՝ Նիդերլանդներում, տարեցների համար նախատեսված ծերանոցում ապրելը նորմ է: Այս տները նման չեն սոցիալական հաստատությունների, այլ հիշեցնում են հյուրանոցներ, որոնք տեղակայված են քաղաքային բանուկ վայրերում: Տարեցների համար կարևոր է լինել մարդկանց մեջ և ակտիվորեն շփվել: Ֆրանսիան աշխարհում ունի տարեցների խնամքի ամենաառաջադեմ համակարգը: 60 տարեկանից բարձր կարիքավոր թոշակառուներին օգնելու համար երկիրը հսկայական միջոցներ է հատկացնում[2]:

Մենք ապրում ենք մեր իրականության մեջ՝ մեր սեփական հնարավորություններով, առանձնահատկություններով, դժվարություններով: Մեր երկրում ծերանոցաբնակ տարեցների հոգեբանությունը հակառակ պատկերն ունի. ընտանիքի անդամների՝ տարեց մարդուն ծերանոց կամ խնամքի տուն տեղավորելու առաջարկները հնչում են որպես դատավճիռ: Նման երեխաները հավետ դատապարտման են ենթարկվում, իսկ տարեցներն իրենց դավաճանված ու լքված են զգում, տառապում՝ ընտանիքից դուրս ապրելով:

Ինչ վերաբերում է մանկատներին, ապա յուրաքանչյուր երկրի պարագայում, անկախ մտածելակերպից, մանկատանը հայտնված երեխան արդեն իսկ ընկալվում է որպես զոհ, և գործ ունենք խեղաթյուրված ճակատագրի հետ[3]:

Ակնհայտ է, որ այս երկու խոցելի խմբերի միջև փոխազդեցության ապահովումը թույլ կտա մեղմել վերջիններիս մենությունը, զգալ ընտանեկան ջերմություն, բարելավել սեփական վիճակը՝ մեկ այլ կյանքի համար կրելով պատասխանատվություն: Նման փոխազդեցության փորձեր արդեն իսկ արվել են[4]:

Օրինակ՝ «Միջսերնդային ուսուցման կենտրոններ» կոչվող նախագիծը երկար տարիներ է, ինչ իրագործվում է Ճապոնիայում (1976 թ.-ին հիմնվել է առաջին կենտրոնը), ԱՄՆ-ում (1990-ականներին նման կենտրոն է հիմնադրվել Սիեթլում, որը գտնվում է Պրովիդենս Մաունթ Սենտ Վինսենթ ծերանոցում), Կանադայում, Մեծ Բրիտանիայում և Ավստրալիայում: Ծրագրի շրջանակներում ծերանոցների շուրջ ձևավորվում են միջսերնդային ուսումնական կենտրոններ, որտեղ ընդունվում են մանկապարտեզի տարիքի երեխաներ, որպեսզի նրանք կարողանան ժամանակ անցկացնել տարեցների հետ, սոցիալականացվել, սովորել և խաղալ տարբեր խաղեր: Սա այնքան էլ նույնը չէ, ինչ մանկատների և ծերանոցների միավորումը, բայց, այդ առումով, միջսերնդային շփման որոշակի փորձ է: Նման նախագծերի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները հաստատում են, որ սերունդների միջև շփումը դրականորեն է ազդում ինչպես երեխաների, այնպես էլ տարեցների վրա[5,6]:

1991 թ.-ին ԱՄՆ-ում նմանատիպ ծրագիր մեկնարկեց միջազգային ուսումնական կենտրոնի (ILC) ծրագրի շրջանակում, Սիեթլում՝ Պրովիդենս Մաունթ Սբ. Վինսենթում: Այստեղ ապրում էին 400 տարեց բնակիչներ (միջին տարիքը՝ 92), և նույն շենքում աշխատանքային օրերին գործում էր 0-ից 5 տարեկան 125 երեխաների

[2] Дом пожилых людей и детский дом в с. Спасское – новый опыт, новый путь. https://sozidatel.dp.ua/dom-pozhilyh-lyudej-i-detskij-dom-v-s-spasskoe-novyj-opyt-novyj-put/

[3] Նույն տեղում:

[4] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://www.asi.org.ru/news/2015/07/10/detskij-dom-i-dom-prestarelyh-pod-odnoj-kryshej-eksperty-otsenivayut-sotsialnyj-eksperiment/

[5] The Conversation

[6] М. Есимханов, Фейк | В Канаде объединили дома престарелых с детскими приютами, 24.11.2020, https://factcheck.kz/claim-checking/verdict/fejk-v-kanade-obedinili-doma-prestarelyx-s-detskimi-priyutami/

համար նախատեսված մանկապարտեզ՝ «Մաունթս» միջսերնդային ուսումնական կենտրոնը, որը վճարովի էր: Սաների մոտ 10%-ը ծերանոցի և բուն մանկապարտեզի աշխատողների զավակներն էին: Երեխաները և ծերերը շփվում էին 20 րոպեից մինչև 1 ժամ[7]: Շաբաթական հինգ օր երեխաներն այցելում էին ավագ սերնդին, որպեսզի միասին զբաղվեն արվեստով, նվագեն, պարեն, միմյանց պատմեն պատմություններ, ճաշ պատրաստեն և այլ հետաքրքրական գործողություններ կատարեն՝ ժամանակն անցկացնելով օգտակար և հագեցած: Փորձի արդյունքն ակնհայտ էր: Երեխաների ու տարեցների նման շփումը շատ բան էր տալիս երկու սերնդին էլ՝ ապահովելով փոխազդեցություն[8]: Սիեթլի կենտրոնը դարձավ միջսերնդային փոխազդեցության ամենահայտնի օրինակը, որի մասին նույնիսկ նկարահանվեց վավերագրական ֆիլմ՝ «Present Perfect» վերնագրով:

1976 թ.-ին Տոկիոյի Էդոգավա շրջանում առողջապահության նախարարության և շրջանի վարչակազմի թույլտվությամբ ստեղծվեց «Ինտեգրված միջսերնդային կենտրոն»՝ Կոտոեն, որտեղ նույն շենքում տեղակայվեցին ծերանոց և մանկապարտեզ: Ճարտարապետները մեծ ուշադրություն էին դարձրել ինտերյերին՝ տարածքի ներքին հարդարմանը: Փորձը ցույց էր տալիս, որ երեխաները, ծրագրի շրջանակում ընկերանալով ծերանոցի տարեց բնակիչների հետ, մեծ ոգևորությամբ ձըգտում էին շփումը շարունակել նաև դպրոցական տարիներին: 1991 թ.-ին կենտրոնին միացան հաշմանդամություն ունեցող տարեցների խնամքի մասնագիտացած կենտրոնը և տարեցների ցերեկային կենտրոնը: 20 տարվա ընթացքում Ճապոնիայում բացվեց նմանատիպ ևս 16 կենտրոն: Ճապոնիայի փորձին հետևեցին Ավստրալիան և Սինգապուրը[9]:

Մեկ այլ նմանատիպ օրինակ է 1991 թ. Մեծ Բրիտանիայի Ուիմբլդոն քաղաքում հիմնված վաղ կրթության կենտրոնը[10]:

Ռուսաստանում նույնպես մի շարք կամավորական կազմակերպություններ իրականացրել են ծերանոցի և մանկատան համատեղման փորձ-նախաձեռնություններ, որոնց արդյունքում կուտակել են բացառիկ դրական փորձ: Նախատեսվում է համանման ծրագիր գործարկել պետական մակարդակով:

Բաշկորտոստանում գործում է «Starobaishsky»՝ տարեցների և հաշմանդամների եզակի պանսիոնատը, որն ընդգրկված է «Երկարատև խնամքի համակարգ» պիլոտային նախագծում: Երեխաներն ու մեծահասակներն ապրում են առանձին շենքերում, որոնք կապված են միջանցքով, ինչը թույլ է տալիս նրանց ամեն օր հանդիպել, շփվել, միասին ճաշել, խաղալ և ստեղծագործել, միասին խնամել այգին և տոնակատարություններ կազմակերպել: Մեկ այլ՝ «1+1» պանսիոնատի ծրագրում, որն ամբողջությամբ ջերմ շփման և սերունդների շարունակականությանն է ուղղված, գործում են երեխաների և մեծերի համատեղ հետաքրքրության խմբակներ՝ թատերական, շախմատի, ասեղնագործության, հմուտ ձեռքերի և այլն[11]:

Բացի համատեղ կեցությունից, տարբեր երկրներում կազմակերպվում են նաև միայնակ ծերերի և որբերի հանդիպումներ: Օրինակ՝ Երևանում 2018 թ. դեկտեմբերի վերջին տեղի է ունեցել «Մեծ ընտանիք» միջոցառումը, որը կազմակերպել է Գերմանիայում հայկական սփյուռքը ներկայացնող «Հայկական արմատ» հասարակական կազմակերպությունը: Երևանի տուն-ինտերնատներից մեկի բնակիչները հանդիպել են մանկատան երեխաների հետ: Հանդիպման մասնակցությունը կամավոր էր: Այստեղ համատեղ բնակություն

---

[7] Мельников.С. домом престарелых можно объединить детский сад. А вот детский дом – нельзя, 22.01.2019, https://www.miloserdie.ru/article/s-domom-prestarelyh-mozhno-obedinit-detskij-sad-a-vot-detskij-dom-nelzya/

[8] Дом престарелых совместили с детским садом, 2015, https://emosurff.com/post/2997/Dom_prestarelykh_sovmestili_s_detskim_sadom.html

[9] Мельников.С. домом престарелых можно объединить детский сад. А вот детский дом – нельзя, 22.01.2019, https://www.miloserdie.ru/article/s-domom-prestarelyh-mozhno-obedinit-detskij-sad-a-vot-detskij-dom-nelzya/

[10] Նույն տեղում:

[11] Детский дом и Дом престарелых под одной крышей, 8 August 2019, https://dzen.ru/media/starostvradost/detskii-dom-i-dom-prestarelyh-pod-odnoi-kryshei-5d4b22ee43bee300aef82e81

նախատեսված չէր[12]:

Միջազգային փորձում արդեն իսկ կիրառված դեպքերի վերաբերյալ ծերանոցների աշխատակիցների կարծիքը հետևյալն է. նման ծրագրերի իրականացումից հետո ծերերի շրջանում ակնհայտորեն դրսևորվում է հոգեբանական վիճակի բարելավում՝ կենսունակություն և ապրելու ցանկություն[13]:

Պարզելու համար նման նախագծերի իրագործելիության հնարավորությունը ՀՀ-ում կազմակերպել ենք հարցում և հարցազրույց ընտրանքային խմբի հետ (թվով՝ 200 հոգի): Հարցմանը մասնակցել են մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողներ, ծերանոցի բնակիչներ, մանկատան աշխատակիցներ: Հարցումը նպատակ ուներ բացահայտելու նախագծի իրականացման ուղղությունը՝ մշտական հանդիպումնե՞ր, թե՞ համատեղ կեցություն, և արդյո՞ք հայ մայրիկները կողմ են, որ իրենց երեխաները պարբերաբար շփվեն ծերանոցաբնակ տարեցների հետ:

Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ծնողների ընդամենը 12%-ն է կողմ նման շփմանը: Դեմ կարծիք արտահայտողները պարզաբանում էին, որ այդպիսի հանդիպումները կարող են բացասաբար անդրադառնալ իրենց մանուկների վրա:

Ինչ վերաբերում է ծերանոցաբնակների շրջանում իրականացված հարցմանը, ապա մշտական հանդիպումների տեսքով նախագիծը հավանության արժանացավ, և գրեթե բոլոր (98%) հարցվողները դա որակեցին որպես վերջին շրջանի լավագույն գաղափար:

Ծերանոցի մի բնակչուհի հարցազրույցի ընթացքում նշեց, որ մասնագիտությամբ մանկավարժ է, ուստի մեծապես ոգևորվել է սերունդների միավորման գաղափարից: Նրա համոզմամբ՝ մանուկների, դպրոցականների, ուսանողների հետ առնչվող դաստիարակները, ուսուցիչները, դասախոսները ավելի երիտասարդ են իրենց զգում, և, հիմնվելով անցած ուղու վրա, ևս մեկ ուշագրավ փաստ հավելեց՝ երեխաները, որոնք չունեն տատիկ-պապիկներ, ձգտում են շփվել տարեց ուսուցիչների հետ:

Այսպիսով, որպես մեկնարկային քայլ, կարելի է կազմակերպել մանկատան երեխաների համերգներ ծերանոցներում: Ընդ որում, ցանկալի է դրանց մասնակից դարձնել նաև մանկատներում բնակվող հատուկ կարիքներով երեխաներին, որոնք հատկապես սոցիալականացման կարիք ունեն: Կարծում ենք՝ նման շփումները, աշխատանքային ու ստեղծագործական համատեղ նախագծերի իրականացումը միմիայն կառողջացնեն: Իհարկե, նման հանդիպումներ կազմակերպելիս անպայման պետք է հաշվի առնել երկու կողմի առանձնահատկությունները, և ամենակարևորը՝ մասնակցությունը պետք է լինի կամավոր հիմունքով:

Գաղափարը, անկասկած, առաջին հայացքից շատ գայթակղիչ է, բայց պահանջում է զգուշավորություն և շրջահայացություն: Ուստի, նախևառաջ, անհրաժեշտ է կատարել մանկատան և ծերանոցի բնակիչների համատեղելիության ռիսկերի հանգամանալից վերլուծություն:

[12] Мельников.С. домом престарелых можно объединить детский сад. А вот детский дом – нельзя, 22.01.2019, https://www.miloserdie.ru/article/s-domom-prestarelyh-mozhno-obedinit-detskij-sad-a-vot-detskij-dom-nelzya/

[13] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://www.asi.org.ru/news/2015/07/10/detskij-dom-i-dom-prestarelyh-pod-odnoj-kryshej-eksperty-otsenivayut-sotsialnyj-eksperiment/

Կարևոր ռիսկերից է առողջության հարցը: Նախագծի մշակման ժամանակ պետք է հաշվի առնել կողմերի առողջական վիճակը, ինչը կլինի ծրագրին մասնակցելու կարևոր նախապայման: Գաղտնիք չէ, որ և՛ մանկատան, և՛ ծերանոցի բնակիչները առանձնահատուկ հանրույթներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի բարդ խնդիրներ՝ և՛ հոգեբանական, և՛ ֆիզիկական տեսանկյունից: Տարեցները, որպես կանոն, բավական լուրջ ախտորոշումներով են, թույլ են և աջակցության կարիք ունեն, արագորեն հոգնում են: Չի բացառվում, որ նրանք տառապեն նաև հիշողության հետ կապված խնդիրներից և դեմենցիայից: Այստեղ խնդրահարույց է, թե որքան ժամանակ նրանք կարող են դիմանալ երեխաների աղմուկին և ակտիվությանը: Մանկատան երեխաները նույնպես կարող են ունենալ իրենց ախտորոշումները, երբեմն՝ շատ լուրջ: Հարցն արդյունավետ համատեղումն է, այլ ոչ տարբեր ինստիտուտների մեխանիկական միավորումը, որի համար անհրաժեշտ է մանրակրկիտ հաշվարկված և փորձարկված կառուցակարգ, որ կողմերից ոչ մեկը ֆիզիկապես և հոգեպես չտուժի[14]: Որպեսզի նրանց համատեղ ժամանցը չվերածվի այս կամ այն կողմի նկատմամբ զուտ հոգատարության, առաջնային անհրաժեշտ է իրականացնել հաստատությունների բնակիչների ֆիզիկական առողջության մշտադիտարկում՝ պարզելու ծրագրին մասնակցելու հնարավորությունները:

Ի սկզբանե շատ դժվար է մշտական հիմունքներով համատեղել երկու հաստատությունները: Համատեղման արդյունքում կարող է առաջանալ մեկ այլ խնդիր՝ սպասելիքների և իրականության անհամապատասխանություն, որին կարող են բախվել երկու կողմն էլ:

Մանկատների երեխաները և ծերանոցների տարեցները տարբեր ծագման, կյանքի փորձի և մշակույթների կրողներ են[15]:

Բացի ծերանոցի հանդեպ ընկալման տարբերությունից, նաև գոյություն ունի ծերանոցաբնակների հոգեբանության տարբերություն՝ պայմանավորված արտաքին գործոններով (բռնություն, աղքատություն, ընտանեկան խնդիրներ), որոնք անուղղակիորեն ողջ կյանքում ազդում են վերջիններիս վրա և կարող են արտացոլվել բնավորության մեջ՝ ստեղծելով բացասական մտածողություն: Ինչ վերաբերում է ծնողազուրկ երեխաներին, որոնք ունեն իրենց խնդիրները, ապա տարեցների հետ նրանց շփումը կարող է այդքան էլ հեշտ չլինել: Նման խնդիրը վերացնել հնարավոր չէ, բայց մեղմել կարելի է: Որպես լուծում՝ կարող է ծառայել նախապատրաստական աշխատանքը: Ծնողազուրկ երեխաները պետք է պատրաստ լինեն շփման, և, որ ամենակարևորն է՝ որակյալ, օգտակար շփման համար պետք է սովորեցնել շփվել:

Այդ նպատակով, որպես մեկնարկ, ճիշտ կլինի շաբաթական մեկ-երկու անգամ մտերմիկ հանդիպումներ կազմակերպել ծերերի և երեխաների միջև:

Լուրջ խնդիր է երեխայի և մեծահասակի միջև կապվածության ձևավորումը: Խթանելով կապվածություն ծեր մարդու հետ այն դեպքում, երբ առկա է հավանականություն, որ երեխան շուտով ստիպված կլինի կորցնել վերջինիս, արդեն իսկ հոգեբանական մեծ ազդեցություն կարող է թողնել[16]:

Քանի որ երկուստեք գործ ունենք արդեն իսկ խոցված հոգեբանությամբ մարդկանց հետ, այստեղ կարևորը «դեմիուրգային բարդույթի» չբախվելն է՝ ճակատագիրը սեփական ըմբռնումով որոշելը: Ծրագրին մասնակցությունը պետք է լինի կամավոր, իսկ որպես ծրագրի հաջողության ցուցիչ՝ նախ անհրաժեշտ է ավելի հստակորեն հասկանալ նպատակները և, որ ամենակարևորն է, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, ինչը թույլ կտա բարձ-

[14] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://st-martin.ru/raznoe-2/kak-otkryt-chastnyj-detskij-dom-pochemu-detskij-dom-ne-mozhet-byt-negosudarstvennym-s-tochki-zreniya-zakona.html

[15] Дом престарелых совместили с детским садом, 2015, https://emosurff.com/post/2997/Dom_prestarelykh_sovmestili_s_detskim_sadom.html

[16] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://www.asi.org.ru/news/2015/07/10/detskij-dom-i-dom-prestarelyh-pod-odnoj-kryshej-eksperty-otsenivayut-sotsialnyj-eksperiment/

ռացնել նման միջոցառումների արդյունավետության մակարդակը: Նախագծում առկա բոլոր ռիսկերը հնարավոր չէ կանխատեսել, հաշվարկել, դրանցից մի քանիսը կարող են դրսևորվել միայն մի քանի տարի անց:

Անկախ ռիսկերից, որոնք իսկապես կան, ամեն դեպքում այս գաղափարի իրագործումը Հայաստանում վերոնշյալ սոցիալական խնդիրների լուծման բավական նպատակահարմար մոտեցում է, հատկապես, որ կիրառման դրական միջազգային փորձն առկա է:

2021 թ. ՀՀ-ում գործել է տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 8 հաստատություն, որից 4-ը՝ պետական (3-ը՝ Երևանում, 1-ը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզում), 4-ը՝ ոչ պետական (2-ը՝ ՀՀ Լոռու մարզում, 1-ական՝ ՀՀ Կոտայքի և Սյունիքի մարզերում): Պետական 3 և ոչ պետական 2 հաստատություններ ունեն շենքերին կից կամ ամրակցված այլ տարածքներ: Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության պետական և ոչ պետական հաստատությունների շենքերը նախատեսված են եղել, համապատասխանաբար՝ 1130 և 196 խնամյալների համար: 2021 թ. ՀՀ-ում գործել է 7 մանկատուն, որից 5-ը՝ պետական (2-ը՝ Երևանում, 1-ական՝ ՀՀ Արարատի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում), 2-ը՝ ոչ պետական (1-ական՝ Երևանում և ՀՀ Կոտայքի մարզում): Մանկատները ևս ունեն շենքերին կից կամ ամրակցված այլ տարածքներ: Պետական և ոչ պետական մանկատների շենքերը նախատեսված են եղել, համապատասխանաբար՝ 665 և 222 երեխայի համար (աղյուսակ 1)[17]:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ ՀՀ պետական և ոչ պետական՝ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հաստատություններում, ընդհանուր առմամբ, հաշվառված է 1144 խնամյալ, որից վերոնշյալ ծրագրին կարող է մասնակցել մոտ 140 տարեց: Հաշմանդամություն ունեցողների մեջ (767 հոգի) ևս կան տարեցներ, որոնց կարգավիճակը չի խոչընդոտում դառնալ ծրագրի մասնակից (աղյուսակ 2):

Վիճակագրական տվյալների համաձայն՝ մանկատներում հաշվառված է 740 երեխա, որից առաջնային ծրագրին կարող է մասնակցել 423-ը, այդ թվում՝ հաշման-

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ պետական և ոչ պետական՝ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հաստատություններում հաշվառված խնամյալների տարիքային կազմը և առողջական վիճակը, 2021 թ.[18]

		Խնամյալների թվաքանակը		այդ թվում՝ ըստ տարիքային և խմբերի							
		ընդամենը	նրանցից՝ կանայք	մինչև 30 տարեկան		31 - 50 տարեկան		51 - 70 տարեկան		71 և բարձր տարիքի	
				ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք	ընդամենը	նրանցից՝ կանայք
Խնամյալների թվաքանակը տարեվերջին	**ընդամենը**	**1 144**	**575**	**89**	**31**	**260**	**114**	**437**	**205**	**358**	**225**
	պետական	**994**	**498**	**89**	**31**	**256**	**113**	**372**	**179**	**277**	**175**
	ոչ պետական	**150**	**77**	**-**	**-**	**4**	**1**	**65**	**26**	**81**	**50**
նրանցից՝											
անկողնային	ընդամենը	237	145	8	3	39	13	73	41	117	88
	պետական	207	123	8	3	38	13	66	36	95	71
	ոչ պետական	30	22	-	-	1		7	5	22	17
հաշմանդամություն ունեցող	ընդամենը	767	359	89	31	254	113	323	157	101	58
	պետական	733	346	89	31	250	112	304	151	90	52
	ոչ պետական	34	13	-	-	4	1	19	6	11	6
զավակ ունեցող	ընդամենը	360	176	-	-	13	6	116	48	231	122
	պետական	265	132	-	-	12	5	62	28	191	99
	ոչ պետական	95	44	-	-	1	1	54	20	40	23

[17] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., էջ 249, 262, https://armstat.am/am/?nid=82&id=2414

[18] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հաստատությունների գործունեություն, էջ 264, https://armstat.am/am/?nid=82&id=2414



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Խնամյալների թվաքանակի տոկոսային բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի, 2021 թ. տարեվերջ[19]

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ՀՀ պետական և ոչ պետական մանկատներում հաշվառված երեխաների տարիքային կազմը և առողջական վիճակը, 2021 թ.[20]

	Երեխաների թվաքանակը		այդ թվում՝ ըստ տարիքային խմբերի									
			մինչև 1 տարեկան		1-6 տարեկան		7-9 տարեկան		10-15 տարեկան		16-18 տարեկան	
	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ
Երեխաների թվաքանակը տարեվերջին	**740**	**334**	**38**	**18**	**103**	**45**	**77**	**38**	**245**	**106**	**277**	**127**
նրանցից՝												
անկողնային	73	36	4	1	31	12	15	10	8	5	15	8
քրոնիկ հոգեկան շեղումներով	244	105	-	-	3	2	4	2	53	20	184	81
դպրոց հաճախող	347	155	-	-	6	2	41	19	195	85	105	49
հաշմանդամություն ունեցող	499	214	12	7	53	27	58	26	144	56	232	98

դամություն ունեցող: Կան այնպիսիք, որոնց հաշմանդամության կարգավիճակը չի խոչընդոտում ծրագրին մասնակցությունը:

Հարցազրույցների ժամանակ պարզեցինք, որ և՛ ծերանոցներում բնակվող տարեցների, և՛ մանկատան երեխաների մեծամասնությանը հարազատները չեն այցելում: Վերջիններս սոցիալականացման, շփման կարիք ունեն, ինչը հատկապես մանկատան սաների պարագայում կարող է դառնալ ճակատագրական:

Մանկատների շրջանավարտները, սոցիալականացված չլինելով, հարմարեցված չեն կյանքին: Նրանք չգիտեն՝ ինչին ձգտել, ինչպես կազմակերպել իրենց կյանքը, չունեն ընտանեկան կյանքի փորձ, չգիտեն՝ ինչպես կառավարել գումարը:

Հիմնվելով համաշխարհային սոցիոլոգիական հետազոտությունների վրա՝ կարող ենք վկայել, որ ծնողազուրկ երեխաների՝ հանցագործ, թմրամոլ կամ անբարոյական դառնալու ռիսկը մեծ է:

Օրինակ, ՌԴ վիճակագրության համաձայն, 67000 որբից միայն 10%-ն է կյանքում գտել իր տեղը, 40%-ը հայտնվել է բանտում, մյուս 40%-ը՝ դարձել հարբեցող, իսկ մնացած 10%-ն ինքնասպան է եղել[21]: Իրա-

[19] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., էջ 264, https://armstat.am/am/?nid=82&id=2414
[20] ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., Մանկատների գործունեություն, էջ 251, https://armstat.am/am/?nid=82&id=2414
[21] Илышева М., Никитина А., «Решение социальных проблем наиболее незащищенных категорий граждан с использованием проектного подхода», 2021 г. Екатеринбург, РФ https://elar.urfu.ru/bitstream/10995/99881/1/978-5-91256-519-9_2021_097.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Խոցելի խմբերի միավորումից ակնկալվող արդյունքները

Շահագրգիռ կողմեր	
Ներանոցի բնակիչներ	**Մանկապան բնակիչներ**
• ընկճախտի մակարդակը կնվազի, • կյանքի իմաստ կհայտնվի, • հնարավորություն կունենան ինքնադրսևորվելու, • հնարավորություն կունենան երեխաներին ինչ-որ բան սովորեցնելու, • սոցիալական ակտիվության մակարդակը կբարձրանա, • չեն զգա միայնակ, • առողջական վիճակը կբարելավվի • հուզական վիճակը կբարելավվի	• ինքնասպանությունների թիվը կնվազի, • հանցագործությունների թիվը կնվազի, • կսովորեն սեր տալ, • մեծահասակներից կլսեն արժեքավոր խորհուրդներ, • ձեռք կբերեն ինքնուրույն ապրելու ունակություն, • կբարձրանա հարմարվողականության մակարդակը, • կծանոթանան ընտանիքի մոդելին, • կսովորեն շփվել մեծահասակների հետ

պես, ահասարսուռ վիճակագրություն:

Այս երկու հաստատությունների բնակիչներն էլ սոցիալական մեկուսացման մեջ են, որը վկայում է շփման անբավարարության մասին: Առաջարկվող շփման ձևը, իհարկե, չի կոտրի արատավոր շրջանը, բայց, ինչ խոսք, կմեղմի իրավիճակը, թույլ կտա որոշ չափով իրացվել:

Խոցելի երկու խմբերը միավորող կազմակերպություն ստեղծելուց կշահեն բոլոր շահագրգիռ կողմերը (աղյուսակ 3):

Յուրաքանչյուր նախագծի կարևոր կողմն այն է, թե ով է իրագործողը կամ պատասխանատուն: Նման նախագիծ հնարավոր կլինի իրագործել՝ համախմբելով պետության և հասարակության ջանքերը:

Նախ՝ պետք է ընտրել նախագծի իրականացման վայրը: Այսպես, ըստ ՎԿ տվյալների, և՛ մանկատները, և՛ տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության հաստատությունները հիմնական շենքերին կից կամ ամրակցված ունեն տարածքներ, որոնք այդքան էլ նպատակային կերպով չեն օգտագործվում, ուստի կարելի է դրանք վերակառուցել և կիրառել որպես նման ծրագրերի իրագործման վայրեր: Մեկ այլ տարբերակ է չշահագործվող պետական կառույցների վերանորոգումն ու վերազինումը (օրինակ՝ նախկին պետական առողջարանները՝ համապատասխան ենթակառուցվածքներով)՝ ծառայեցնելով համապատասխան նպատակին: Այստեղ կարևոր նախապայման է հաստատության տեղադիրքը, որպեսզի այն շատ հեռու չլինի դպրոցից (ծրագրի 423 հնարավոր մասնակցից 347-ը հաճախում է դպրոց), մանկապարտեզից և բժշկական հաստատությունից:

Ամեն մի նախագիծ կյանքի կոչվելու համար կարիք ունի ֆինանսական աջակցության, և նույնիսկ եթե պետությունը տրամադրի շինություն, միևնույն է, բավական ֆինանսական միջոցներ են հարկավոր: Որպես ֆինանսավորման աղբյուր՝ կարող են հանդես գալ բարեգործական հիմնադրամները: Մեկ այլ տարբերակ է տարեցների համար նախատեսված, վճարովի հիմունքով խնամքի կենտրոնի հիմնումը, որտեղ, որպես ֆինանսավորման աղբյուր, ծախսերի փոխհատուցման միջոց, կարող են ծառայել տարեցների կեցության վճարները, օրինակ՝ կենսաթոշակները (միայնակ կամ անապահով խմբերի համար) կամ ծերերի հարազատների միջոցները (արտերկրում բնակվող հարազատները, որոնք ի վիճակի են և ցանկանում են վճարել իրենց բարեկամի համար, որպեսզի նա բնակվի նման հաստատությունում և զերծ մնա միայնությունից): Նման ֆինանսավորման աղբյուրով հաստատությունը, սակայն, պետք է ունենա բավական գրավիչ առաջարկներ, որոնք կստիպեն տարեցներին դիմել իրենց:

Աշխարհում տարածված է վճարովի հիմունքով գործող տարեցների խնամքի կենտրոնների փորձը, որտեղ կեցության արժեքը սահմանվում է մատուցվող ծառայությունների հիման վրա՝ ըստ ընտրված ծառայությունների փաթեթի, պահանջվող

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Ծերանոցների կողմից վճարովի հիմունքով մատուցվող ծառայությունների փաթեթներ[22]

Ուկրաինա		
Փաթեթ «VIP»՝ 350–425 եվրո	**Փաթեթ «Սթանդարտ»՝ 175 – 225 եվրո**	**Փաթեթ «Օպտիմալ»՝ 137 – 187 եվրո**
▪ սենյակում՝ 1-2 մարդ, ▪ սնունդ՝ ընտրությամբ, ▪ խնամակալ՝ 24/7, ▪ տարրական բժշկական հետազոտություններ՝ տեղում, դեղորայքի ընդունման վերահսկում	▪ սենյակում՝ 3-4 մարդ, ▪ սնունդ՝ բարելավված, ▪ հոգատար խնամակալ՝ ըստ կանչի, ▪ տարրական բժշկական հետազոտություններ՝ տեղում, դեղորայքի ընդունման վերահսկում	▪ սենյակում՝ 4 մարդ, ▪ ստանդարտ սնունդ, ▪ խնամակալ՝ ըստ անհրաժեշտության, ▪ տարրական բժշկական հետազոտություններ՝ տեղում, դեղորայքի ընդունման վերահսկում
Գերմանիա **Ծերանոցում ապրելու միջին արժեքը՝ 3170 եվրո** **(կենսաթոշակ + ապահովագրություն + 1629 եվրո՝ ընտանիք)**		
▪ Altenwohnheim (բնակիչները վարում են իրենց տնային տնտեսությունը, հիմնականում ինքնապահովվում են և ստանում միայն սահմանափակ օգնություն՝ խնամքի տեսքով)	▪ Altenheim (բնակիչները միայն փոքր խնամքի կարիք ունեն, բայց կարող են ապավինել կանոնավոր օգնության՝ մաքրության, սննդի և տնային տնտեսության հարցերում)	▪ Altenpflegeheim (տրամադրվում է ստացիոնար բուժում անօգնական մարդկանց, որոնք կարող են ստանալ շուրջօրյա արտաքին օգնություն)
Իսրայել **Ծերանոցում ապրելու արժեքը՝ 4000-ից մինչև 8000 եվրո**		
▪ Հոսթելը տուն է, որը կառուցված է թոշակառուների համար, որոնք չեն ցանկանում կամ չեն կարող մենակ լինել: ▪ Մարդիկ, որոնք 1989-1990 թթ. ժամանել են Իսրայել, բնակություն են հաստատել հանրակացարաններում: ▪ Շատերն ունեն աղքատի կարգավիճակ (սեփական բնակարան չունեցող, պետությունից ծերության նպաստ ստացող մարդիկ):	▪ Ծերանոցը նախատեսված է տարեցների համար, որոնք օգնության կարիք ունեն: ▪ Իսրայելում կա ծերանոցի 3 տեսակ. ✓ Tshushim՝ քիչ խնամքի կարիք, ✓ Siudim. – siudim tzlulim»՝ լիարժեք հոգատարություն ողջամիտ մարդկանց նկատմամբ. – «siudim po tzlulim»՝ լիարժեք խնամք հիշողության կորստով մարդկանց համար: ▪ «Տշուշեյ Նեֆեշ». հիշողության կորստով հիվանդների աննշան խնամք:	

խնամքի, գտնվելու ժամկետի (երկարաժամկետ (ամրագրված գին)): Փաթեթները ներառում են սենյակ, սնունդ, բժշկական հսկողություն, դեղերի ընդունման վերահսկում (դեղերը ներառված չեն), կանոնավոր հիգիենա[23](աղյուսակ 4):

Երեխաների հետ համատեղ ապրելու համար կարևոր նախապայման է, որ ծրագրում ընդգրկված տարեցներն ինքնասպասարկվելու և ազատ տեղաշարժվելու ունակություն ունենան:

Կարծում ենք՝ ոչ պակաս աջակցություն կցուցաբերի սփյուռքը, կլինեն նաև կամավորներ, որոնք կցանկանան ապրել և, միաժամանակ, ծառայություն մատուցել:

Հարցման ժամանակ պարզեցինք, որ մանկատան սաները, նույնիսկ չափահաս դառնալով, չեն ցանկանում հեռանալ այդտեղից: Նման դեպքերում հնարավոր է վերջիններիս առաջարկել կեցության պայմանով, հասարակական հիմունքով աշխատել նոր հաստատությունում:

Ճանապարհը բարդ է, բայց իրագործելի: Ոչինչ չի խանգարում իրականացնել նման

[22] Дом пожилых людей и детский дом в с. Спасское – новый опыт, новый путь. https://sozidatel.dp.ua/dom-pozhilyh-lyudej-i-detskij-dom-v-s-spasskoe-novyj-opyt-novyj-put/

[23] Նույն տեղում:

սոցիալական նախագիծ, որը սկզբունքորեն կմիավորի տարեցներին և երեխաներին՝ հնարավորություն տալով և՛ առաջիններին, և՛ երկրորդներին իրացվելու[24]: Նման փոխազդեցությունը թույլ կտա տարեց մարդկանց ոչ միայն իրենց պահանջված ու կարևոր զգալ, այլև կօգնի սեփական փորձը փոխանցել երիտասարդ սերնդին[25]:

Ինչպես ցույց է տալիս բարեգործական հիմնադրամների, ՀԿ-ների և կամավորների փորձը, դրա ազդեցությունը միայն դրական է[26]: Բայց, միաժամանակ, թե՛ երեխաներին, թե՛ տարեցներին օգնելն ունի իր առանձնահատկությունները: Պետք է հաշվի առնել, որ այս հաստատություններն աչքի են ընկնում կյանքի տարբեր ռիթմով, կեցության պայմաններով, ռեժիմով, ուստի անհրաժեշտ է աշխատել նախ նվազագույնի հասցնել համատեղ շփմանը խաթարող ռիսկերը: Պետք է սկսել պիլոտային ծրագրերով՝ հստակ մշակված մեթոդաբանությամբ, հոգեբանական նախապատրաստման և վարվելակերպի ուսուցողական բաղադրիչով՝ փորձարկելով տարբեր սերունդների հանդիպման արդյունավետությունը: Մինչև նման միավորում նախաձեռնելը, ավելի հեշտ իրագործելի առաջարկ կարող է լինել մանկատների և մանկապարտեզների երեխաների համար տարեցների հետ հանդիպման օրեր կազմակերպելը: Այդպիսով՝ հնարավորություն կստեղծվի, որ երեխաներն ու թոշակառուները այցելեն միմյանց, շփվեն, ստեղծագործեն, ճաշ պատրաստեն, խաղեր խաղան և այլն: Արդյունքում, կբացահայտվեն համատեղ շփման ժամանակ ի հայտ եկող խնդիրները, և փորձ կարվի գտնելու դրանց լուծման ուղիներ: Քայլ առ քայլ հանգելով ծերանոցը և մանկատունը միավորելու գաղափարին, կարելի է ձեռնամուխ լինել նման կազմակերպության ստեղծմանը: Վերականգնելով որևէ լքված պետական շինություն՝ կամավոր հիմունքով կարելի է հավաքագրել դրա բնակիչներին՝ ՀՀ ծերանոցներում և մանկատներում հաշվառված անձանց՝ հաշվի առնելով վերջիններիս առողջական, հոգեկան վիճակի համապատասխանությունը համատեղ ապրելու համար:

Քայլելով երջանկության հետքերով՝ կարելի է հասնել նման հրաշալի արդյունքի՝ տարբեր սերունդների ոչ թե ձևական, այլ աշխույժ բարեկամության...

[24] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://st-martin.ru/raznoe-2/kak-otkryt-chastnyj-detskij-dom-pochemu-detskij-dom-ne-mozhet-byt-negosudarstvennym-s-tochki-zreniya-zakona.html

[25] Дом престарелых совместили с детским садом, 2015, https://emosurff.com/post/2997/Dom_prestarelykh_sovmestili_s_detskim_sadom.html

[26] Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, https://st-martin.ru/raznoe-2/kak-otkryt-chastnyj-detskij-dom-pochemu-detskij-dom-ne-mozhet-byt-negosudarstvennym-s-tochki-zreniya-zakona.html

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ սոցիալական վիճակը 2021 թ., 489-495 էջ, 506-510 էջ, https://armstat.am/am/?nid=82&id=2414
2. Вяткина Ю., Детский дом и дом престарелых под одной крышей: эксперты оценивают социальный эксперимент, 10.07.2015, https://www.asi.org.ru/news/2015/07/10/detskij-dom-i-dom-prestarelyh-pod-odnoj-kryshej-eksperty-otsenivayut-sotsialnyj-eksperiment/
3. Детский дом и Дом престарелых под одной крышей, 08.08. 2019, https://dzen.ru/media/starostvradost/detskii-dom-i-dom-prestarelyh-pod-odnoi-kryshei-5d4b22ee-43bee300aef82e81
4. Дом престарелых совместили с детским садом, 2015, https://emosurff.com/post/2997/Dom_prestarelykh_sovmestili_s_detskim_sadom.html
5. Дом пожилых людей и детский дом в с. Спасское – новый опыт, новый путь. https://sozidatel.dp.ua/dom-pozhilyh-lyudej-i-detskij-dom-v-s-spasskoe-novyj-opyt-novyj-put/
6. Ермолаева Н., Как в Сиэтле детей объединили с пожилыми людьми под одной крышей, Российская газета - Неделя: №280(6851), 10.12.2015, https://rg.ru/2015/12/10/obiedinenie.html
7. Илышева М., Никитина А., «Решение социальных проблем наиболее

незащищенных категорий граждан с использованием проектного подхода», 2021 г. Екатеринбург, РФ, https://elar.urfu.ru/bitstream/10995/99881/ 1/978-5- 91256-519-9_2021_097.pdf
8. Мельников, С домом престарелых можно объединить детский сад. А вот детский дом – нельзя, https://www.miloserdie.ru/article/s-domom-prestarelyh-mozhno-obedinit-detskij-sad-a-vot-detskij-dom-nelzya/, 22.01.2019
9. По всему миру дома престарелых объединяют с детскими приютами: результаты поражают, 19.05.2019, https://kolobok.ua/semya/interesnoe-chtivo/998853-miloe-nou-khau-doma-prestarelykh-obedinyayut-s-detskimi-priyutami
10. Социальный эксперимент: дом престарелых и детский сад под одной крышей,2015, https://storyfox.ru/post/sotsialnyj-eksperiment-dom-prestarelyh-i-detskij-sad-pod-odnoj-kryshej/
11. Что будет если объединить два разных поколения: стариков и детей? Практика объединять дома престарелых с детским садом или приютом для сирот распространяется по миру. К каким результатам это приводит?, 01.08.2019, https://blagodaruyu.com.ua/pro-obedinenie-domov-prestarelyh-i-detskih-priyutov/
12. Юрьевна А., Совместили дом престарелых и детский дом. Что из этого вышло: 18 апреля 2019, https://zen.yandex.ru/media/anyay/sovmestili-dom-prestarelyh-i-detskii-dom-chto-iz-etogo-vyshlo-5cb8502ba07b5e00b2cceac6

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

ПОЖИЛЫЕ И ДЕТИ: ПОПЫТКА СОВМЕСТНОГО СЧАСТЬЯ

Идея гармонии между детством и старостью может служить системой поддержки для уязвимых групп. Обе стороны, и дети, и бабушки-дедушки, нуждаются в тепле и внимании. Обитатели детских домов и домов престарелых, являясь особыми сообществами, имеют определенные проблемы. В связи с рискованным характером проекта, для выявления недостатков и преимуществ совместного взаимодействия необходимо реализовать пилотный проект, посредством которого будет проверена эффективность встречи разных поколений, а затем поэтапно вести к совмещению структур, конечной целью которых является улучшение качества жизни уже пострадавших групп.

Ключевые слова: *детский дом, дом престарелых, пожилые люди, воспитанники детского дома, уязвимые группы, социальные проблемы, социальные проекты, проектные риски, заинтересованные стороны*

Tereza SHAHRIMANYAN
Administrator at "Amberd" Research Center, ASUE

SOCIAL POLICY

ELDERLY PEOPLE AND CHILDREN: AN ATTEMPT TO SHARE HAPPINESS

The idea of harmony between childhood and old age can serve as a support system for vulnerable groups. Both sides, both children and grandparents, need warmth and attention. The inhabitants of orphanages and nursing homes, being special communities, have certain problems. Due to the risky nature of the project, in order to identify the disadvantages and advantages of joint interaction, it is necessary to implement a pilot project through which the effectiveness of meeting different generations will be tested. Then it is necessary to gradually combine the structures, the ultimate goal of which is to improve the quality of life of already affected groups.

Keywords: *orphanage, nursing home, elderly people, children from the orphanage, vulnerable groups, social problems, social projects, project risks, stakeholders*